

ստեղծագործութիւններից, որպէս օրինակ մէջբերեմ միայն այս մէկը.

Մայրս երկու եղբայր ուներ
 հայր ուներ
 մայր ուներ
 անոնք քոյրեր եւ եղբայրներ ունէին
 բոլորն ալ ամուսնացած
 բոլորն ալ զաւակներ ունէին

Անոնցմէ ոչ սա մնաց ոչ ան
 ամենքն ալ-ամենքն ալ
 ես չծնած մեռան

Հայրս ալ մօրս նմանեցաւ
 ինչ որ ուներ՝ հայր մայր եղբայր
 զարմիկներ զարմուհիներ-գերդաստան մը ամբողջ
 ես չծնած մեռան
 երբ աչքերս բացի՝ մայրս մենակ մնացած էր
 հայրդ զիսուոր գնաց ըսին

Նկատելի է գիտակցաբար կատարուած բառի ընտրութիւնը՝ «մեռան» եւ ոչ «մեռցուեցան» կամ «կոտորուեցան»...

Պահպանուած լռութիւնը ծանր է եղել. դրա ազդեցութիւնը՝ հոգեբանօրէն խորտակիչ, մի երեւոյթ, որ որոշների մէջ յորձանք է տուել՝ քանդելու լռութեան պատը ու դուրս ժայթքելու երբ վերացել է տրամաբանութեան ու զգուշաւորութեան արգելքը: Պոլսահայ գրող ու մանկավարժ Արփիար Տէր Մարգարեանի մօտ, ինչպէս նրա դուստրն է